ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/28

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչ Ռ. Չոբանյանի (լիազորագիր՝ տրված 31.03.2022թ.),

Ա/Ձ Սմբատ Մելիքյանի ներկայացուցիչ Ա. Պարանայնի (լիազորագիր՝ տրված 28.03.2022թ.),

քննելով ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում 23.03.2022թ. Ա/Ձ Սմբատ Մելիքյանի կողմից ներկայացված բողոքը (24.03.2022թ. վարույթ ընդունված) (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/28 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>Ա/Ձ Սմբատ Մելիքյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Ա/Ձ Սմբատ Մելիքյանը (հետայսու նաև՝ Մասնակից) ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Գործի նախապատմությունը և փաստերը

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5.2 կետի համաձայն՝ «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի հայտում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայում է հայտի ապահովումը /հրավերի Հավելված 1.3-ը/…:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամպատասխանությունների մասին ծանուցվել է մասնակիցներին՝ առաջարկելով Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել, սակայն ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի աշխատանքների համար 2-րդ բաժնի համար սահմանված կշիռների շեղումը ավելին է՝ քան տասը տոկոսը:

Արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի www.gnumner.am կայքում հրապարակված 18.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշումները իրավաչափ չեն և հակասում են գնումների մասին ՀՀ օրենսդրությանը հետևյալ հիմնավորմամբ.

Ինչպես արդեն նշել ենք, Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5.2 կետի համաձայն՝ «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի հայտում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայում է հայտի ապահովումը /հրավերի Հավելված 1.3-ը/…:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցվել է մասնակիցներին՝ առաջարկելով Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել, սակայն ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի աշխատանքների համար 2-րդ բաժնի համար սահմանված կշիռների շեղումը ավելին է՝ քան տասը տոկոսը:

Արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի www.gnumner.am կայքում հրապարակված 18.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը կազմվել է ճիշտ, կշիռների շեղումները թույլատրելի նորմերի սահմանում են, իսկ Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի կողմից ծավալաթերթ-նախահաշիվը կազմվել, իսկ հետագայում նաև գնահատվել է ծավալաթերթ-նախահաշվի կշիռների տոկոսների մեջ ներառելով նաև ԱԱՀ-ն, որպես ոչ թե առանձին վճարվելիք հարկային վճար, այլ ծավալաթերթում ներառվող կշիռների տոկոսային արժեք:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

1.Պարտավորեցնել «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 18.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

2.Պարտավորեցնել «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը»:

Ի լրումն բողոքի Ա/Ձ Սմբատ Մելիքյանը հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած ԳԲՔԱ-ՆԳ-2022/28 ծածկագրով բողոքը:

Ինչպես արդեն հայտնել ենք ներկայացրած բողոքով, Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5.2 կետի համաձայն՝ «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի հայտում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայում է հայտի ապահովումը /հրավերի Հավելված 1.3-ը/…:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամպատասխանությունների մասին ծանուցվել է մասնակիցներին՝ առաջարկելով

Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկվել, սակայն ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի աշխատանքների համար 2-րդ բաժնի համար սահմանված կշիռների շեղումը ավելին է՝ քան տասը տոկոսը:

Արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի www.gnumner.am կայքում հրապարակված 18.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ կարևորագույն լրացուցիչ փաստական հանգամանքի վրա, այն է.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ ի թիվս ԳԲՔԱ-ՆԳ-2022/28 ծածկագրով բողոքով ներկայացված բազմաթիվ խախտումների՝ խախտել է նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրելով անհամապատասխանություն «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում՝ մասնակցին տրամադրել է ոչ թե ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով սահմանված 1 աշխատանքային օր ժամկետ, այլ այն սահմանափակելով դարձրել է մինչև ժամը 17:00-ն, որն էլ իր հերթին առաջացրել է «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի մոտ լեգետիմ ակնկալիքի սկզբունքի խախտում, քանի որ Ա/Ձ-ն

շտկման ծանուցումը ստանալուց հետո լեգետիմորեն ակնկալել է, որ շտկումը կատարելու է մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այն է՝ մինչև 18:00-ն, այնինչ Պատվիրատուն սահմանափակել է մասնակցի իրավունքները՝ պարտավորեցնելով շտկումը կատարել մինչև ժամը՝ 17:00-ն:

Վերոհիշյալի արդյունքում խախտվել է Կարգի 41-րդ կետի իրավակարգավորումը, որը հանգեցրել է «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի Օրենքով երաշխավորված մասնակցության իրավունքի սահմանափակում:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքներ քննող անձին խնդրում ենք հիմք ընդունել սույն բողոքի լրացմամբ ներկայացրած պահանջները, այն է.

Խնդրում ենք՝

1. Պարտավորեցնել «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5.2 կետով «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի մասով կայացրած որոշումը՝ հայտում շտկում կատարելու պահանջի վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 18.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ «Սմբատ Մելիքյան» Ա/Ձ-ի ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը»:

Ա/Ձ Սմբատ Մելիքյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.03.2022թ. ժամը 09:40-ին և 08.04.2022թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 29.03.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 28.03.2022թ. թիվ 5/06.2.3/4867 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2022 թվականի մարտի 24-ի թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/5041 գրության՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/28 բողոքի վերաբերյալ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով, ներկայացնում եմ շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման 2022 թվականի աշխատանքների» ձեռքբերման նպատակով 2022 թվականի փետրվարի 4-ին հայտարարված ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01 ծածկագրով բաց մրցույթի բոլոր փաստաթղթերը»:

Այնուհետև 07.04.2022թ. Պատվիրատուի ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ դիրքորոշումը և դիտարկումները.

«Դիրքորոշում

1. Առաջարկում եմ Ձեր միջնորդությամբ համապատասխան պատկան կառույցներում նախաձեռնել լրացուցիչ ուսումնասիրություն ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01 ծածկագով բաց մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցների՝ «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00440235) և Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ի (ՀՎՀՀ 75459005), իրական շահառուներին, քանի որ «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթում բացակայում էր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (հրավերի հավելված N 1.1), ինչը նույնիսկ շտկման հնարավորությունից հետո չի ներկայացվել:

2. Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ը գնային առաջարկը ներկայացրել է 125000.0 հազար դրամի, առանց ավելացված արժեքի հարկի, մինչդեռ ըստ Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի ավելացված արժեքի հարկվող շեմ է համարվում 115.3 մլն դրամը:

3. Գնումների մասին օրենսդրությամբ կարգավորված չէ՝ ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01 ծածկագրով բաց մրցույթի Հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետով սահմանված. «4) շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ - իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: » պահանջը, եթե մասնակիցը ավելացված արժեքի հարկ վճարող չէ:

Դիտարկումները

4. Անհասկանալի է բողոքում ներկայացված «... բազմաթիվ խախտումներ. ..» ձևակերպումը, քանի որ բողոքաբերն ի սկզբանե վիճարկում է ներկայացված ծավալաթերթը և ներկայացնում անձնական դիրքորոշումը: Հետագայում այն լրացրել և հիմնավորել է մի կետով, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» գործող 41-րդ կետին: Ուստի, բողոքի լրացումը բավարար հիմքեր չունի:

5. Բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 17.03.2022թ. N 2 արձանալրության 11-րդ կետի որոշմամբ Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ի հայտի անհամապատասխանությունը շտկելու նպատակով, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և 17.03.2022թ. ժամը 15:14-ին ծանուցել Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը և Պատվիրատուի gnumner@env.am և gnumner.mnp@yandex.ru էլ.փոստին, մինչև 2022 թվականի մարտի 18-ը ժամը 17:00, ներկայացնել հայտի ապահովումը՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հրավերի հավելված N 3), հայտի ապահովման բնօրինակը ուղեկցող գրությամբ ներկայացնել ք. Երևան, Կառավարությական տուն 3, շրջակա միջավայրի նախարարություն հասցեով (5-րդ հարկ):

6. Բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 17.03.2022թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած արտահերթ նիստի N 3 արձանագրության 2-րդ կետի որոշմամբ՝ ի լրումն 2002 թվականի մարտի 17-ի արձանագրություն N 2-ի 11.2 կետի, Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ին 17.03.2022թ. ժամը 17:24-ին (շրջակա միջավայրի նախարարության համակարգչային ցանցի աշխատանքների խափանման պատճառով, ճեպապատճենը կցվում է) ծանուցվել է հրավերի 1- ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ մասնակիցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվի ներկայացման մասին: Ձեր ուշադրությանն եմ հրավիրում այն հանգամանքը, որ մասնակիցները ժամանակի սահմանափակման վերաբերյալ գրավոր կամ բանավոր առարկություններ չեն ներկայացրել: Սահմանված ժամկետում Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ն ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, ինչը մեկ անգամ ևս փաստում է, որ սահմանված ժամկետն իրենց համար եղել ընդունելի: Հարկ եմ համարում նշել այն փաստը, որ հայտի ապահովման համար սահմանված ժամկետը (հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ) նախատեսված է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն

որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությամբ: Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի է ունեցել 18.03.2022թ. ժամը 17:10-ին և աշխատանքներն ավարտվել են 21.03.2022թ.-ին, որից հետո gnumner.am կայքում հրապարակվել և մասնակիցներին ծանուցվել է ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի N 4 արձանագրությամբ կայացրած որոշումը: Ձեր ուշադրությանն եմ հրավիրում այն փաստի վրա, որ մասնակիցը ծավալաթերթ- նախահաշիվը պետք է ներկայացներ հայտով և այն լրացված և ստորագրված պետք է լիներ մինչև հայտի ներկայացման պահը, այլ ոչ թե լրացվում է մրցույթի արդյունքերով, ինչը նախատեսված չէ հրավերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.03.2022թ. ժամը 09:40-ին և 08.04.2022թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 08.04.2022թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2022/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Սմբատ Մելիքյանը:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2022թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Սմբատ Մելիքյան Վահագնի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, բացակայում է՝ հայտի ապահովումը՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3):
3. Նույն արձանագրության 11.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Կարգի 41-րդ կետի համաձայն կասեցնել Ընթացակարգը՝ առաջարկելով Մասնակցին շտկել անհամապատասխանությունը և ներկայացնել մինչև ս/թ. մարտ 18-ը ժամը 17:00-ն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.03.2022թ. ժամը 16:00-ի արտահերթ նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Մասնակցի հայտում բացակայում է հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետով նախատեսված Մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը և որոշել ի լրումն 2022 թվականի մարտի 17-ի թիվ 2 արձանագրության 11.2 կետի՝ էլեկտրոնային եղանակով և համակարգի միջոցով տեղեկացնել Ա/Ձ Սմբատ Մելիքյան Վահագնին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը՝ Պատվիրատուի gnumner@env.am և gnumner.mnp@yandex.ru էլ. փոստին ներկայացնելով հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետով նախատեսված Մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

5. Համաձայն Պատվիրատուի կողմից գործի քննության շրջանակներում ներկայացված նյութերի՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 17.03.2022թ. ժամը 17:24-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է Մասնակցին գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.03.2022թ. ժամը 17:10-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է հետևյալը.

- Ա/Ձ Սմբատ Մելիքյան Վահագնի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքի ձևով, ինչը համապատասխանում է հրավերի պահանջներին:
- Ա/Ձ Սմբատ Մելիքյան Վահագնի կողմից հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին. մասնակցի կողմից ներկայացված և հրավերին կցված «Մարտունի մասնաճյուղի Մարտունի տեղամասի» և «Նորատուսի մասնաճյուղի Նորատուղի տեղամասի» ծավալաթերթերով աշխատանքների համար 2-րդ բաժինների սահմանված կշիռները շեղված են ավելի քան տասը տոկոսով:

7. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ա/Ձ Սմբատ Մելիքյան Վահագնի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Սմբատ Մելիքյանի 23.03.2022թ. բողոքը և բողոքի լրացումը՝ կից փաստաթղթերով, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության գրությունները՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) ***իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.***

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Այսպես, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Սմբատ Մելիքյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2022թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Սմբատ Մելիքյան Վահագնի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, բացակայում է՝ հայտի ապահովումը՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3):

Նույն արձանագրության 11.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Կարգի 41-րդ կետի համաձայն կասեցնել Ընթացակարգը՝ առաջարկելով Մասնակցին շտկել անհամապատասխանությունը և ներկայացնել մինչև ս/թ. մարտ 18-ը ժամը 17:00-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.03.2022թ. ժամը 16:00-ի արտահերթ նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Մասնակցի հայտում բացակայում է հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետով նախատեսված Մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը և որոշել ի լրումն 2022 թվականի մարտի 17-ի թիվ 2 արձանագրության 11.2 կետի՝ էլեկտրոնային եղանակով և համակարգի միջոցով տեղեկացնել Ա/Ձ Սմբատ Մելիքյան Վահագնին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը՝ Պատվիրատուի gnumner@env.am և gnumner.mnp@yandex.ru էլ. փոստին ներկայացնելով հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետով նախատեսված Մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

Համաձայն Պատվիրատուի կողմից գործի քննության շրջանակներում ներկայացված նյութերի՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 17.03.2022թ. ժամը 17:24-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է Մասնակցին գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.03.2022թ. ժամը 17:10-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է հետևյալը.

- Ա/Ձ Սմբատ Մելիքյան Վահագնի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքի ձևով, ինչը համապատասխանում է հրավերի պահանջներին:
- Ա/Ձ Սմբատ Մելիքյան Վահագնի կողմից հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում հրավերի պահանջներին. մասնակցի կողմից ներկայացված և հրավերին կցված «Մարտունի մասնաճյուղի Մարտունի տեղամասի» և

«Նորատուսի մասնաճյուղի Նորատուղի տեղամասի» ծավալաթերթերով աշխատանքների համար 2-րդ բաժինների սահմանված կշիռները շեղված են ավելի քան տասը տոկոսով:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ա/Ձ Սմբատ Մելիքյան Վահագնի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Ամփոփելով վերը նշված փաստերը՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 26-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստը հրավիրում է քարտուղարը՝ պատվիրատուի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ կամ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց նշած ժամկետում և օրակարգով: ***<u>Արտահերթ նիստ հրավիրելու, դրա օրակարգի և ժամկետի մասին քարտուղարը նիստից առնվազն վեց ժամ առաջ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղյակ է պահում հանձնաժողովի անդամներին:</u>***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ

կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

(…)

Այսպիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***17.03.2022թ. ժամը 16:00-ի*** արտահերթ նիստի թիվ 3 արձանագրությամբ Ա/Ձ Սմբատ Մելիքյանի հայտում արձանագրել է անհամապատասխանություն՝ վերջինիս դրա մասին ծանուցելով նույն օրը 17:24-ին, իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***18.03.2022թ. ժամը 17:10-ի*** նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշում է կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ, որպիսի պայմաններում արձանագրում եմ, հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:***

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված պահանջները, այն է՝ ***Կարգի 41-րդ կետի հիմքով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.03.2022թ. ժամը 16:00-ի արտահերթ նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը կասեցնելու վերաբերյալ և ծանուցել Մասնակցին՝ անհամապատասխանությունների շտկման համար վերջնաժամկետ սահմանելով 18.03.2022թ. մինչև 17:00-ն և 18.03.2022թ. ժամը 17:10-ի թիվ 4 արձանագրությամբ՝ մեկ աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում (մեկ աշխատանքային օր ժամկետը լրանում է 18.03.2022թ. ներառյալ) որոշում է կայացրել Մասնակցի հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ, որպիսի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ՝ մեկ աշխատանքային օրը լրացած չլինելու դեպքում հրավիրելով գնահատող հանձնաժողովի նիստ և կայացնելով Մասնակցի հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ որոշում:***

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է դադարեցնի Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը և կիրառի Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթը՝ պահպանելով մեկ աշխատանքային օր ժամկետը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ա/Ձ Սմբատ Մելիքյանի կողմից ներկայացված բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է բողոքով ներկայացված մեկ այլ հիմքին, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. ժամը 17:10-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ Ա/Ձ Սմբատ Մելիքյան Վահագնի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացված որոշման իրավաչափությանը, ապա արձանագրում եմ, որ սույն որոշմամբ այն դադարեցվելու հիմքով պայմանավորված քննության առարկա չի դարձվում:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից դիրքորոշմամբ ստորև ներկայացվածին.

«1. Առաջարկում եմ Ձեր միջնորդությամբ համապատասխան պատկան կառույցներում նախաձեռնել լրացուցիչ ուսումնասիրություն ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01 ծածկագով բաց մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցների՝ «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00440235) և Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ի (ՀՎՀՀ 75459005), իրական շահառուներին, քանի որ «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ի էլեկտրոնային ձևով ներկայացված

փաթեթում բացակայում էր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (հրավերի հավելված N 1.1), ինչը նույնիսկ շտկման հնարավորությունից հետո չի ներկայացվել:

2. *Ա/Ձ «Սմբատ Մելիքյան Վահագնի»-ը գնային առաջարկը ներկայացրել է 125000.0 հազար դրամի, առանց ավելացված արժեքի հարկի, մինչդեռ ըստ Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի ավելացված արժեքի հարկվող շեմ է համարվում 115.3 մլն դրամը*», հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«ԳԲՔԱ-ՆԳ-2022/28» ծածկագրով բողոքարկման ընթացակարգը նախաձեռնվել է Ա/Ձ Սմբատ Մելիքյանի բողոքով ներկայացրած փաստերի հիման վրա՝ Ընթացակարգի շրջանակներում վերջինիս ենթադրյալ խախտված իրավունքները բողոքի քննության արդյունքում վերականգնելու նպատակով, այսինքն՝ այն ուղղված է բողոքաբերի իրավունքների իրացմանը:

Ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և վերոնշված դիրքորոշումը՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորություններից բխող գործառույթների շրջանակներում որևէ գործողություն դիրքորոշմամբ վկայակոչվածի վերաբերյալ չի իրականացրել, մինչդեռ Պատվիրատուի լիազորված անձի նախաձեռնությամբ բողոքի քննության շրջանակներում առաջարկվել է դրանք իրականացնել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ ներկայացված առաջարկությունները Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից չեն կարող քննության առարկա դառնալ «ԳԲՔԱ-ՆԳ-2022/28» ծածկագրով բողոքարկման ընթացակարգի շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Սմբատ Մելիքյանի բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-22/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

1. 17.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5.2 կետով Ա/Ձ Սմբատ Մելիքյանի մասով կայացրած որոշումը՝ հայտում շտկում կատարելու պահանջի վերաբերյալ:

2. 18.03.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ Ա/Ձ Սմբատ Մելիքյանի ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

3. գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**